ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «17» սեպտեմբեր 2024 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 213-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԻՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի 15.1-ին հոդվածի 2-րդ մասի 11)-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի N 20-Լ հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 8-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի 2025 թվականի հայտերի քննարկման նպատակով ձևավորել բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահին կից մասնագիտական խորհուրդ և հաստատել խորհրդի անհատական կազմը՝ համաձայն հավելված N 1-ի և աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Հավելված N1
ԲԿԳԿ նախագահի
«17» սեպտեմբեր 2024 թ.
N 213-Ա/Ք հրամանի

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԻՑ ԳԻՏԱԿԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ավետիսյան Պավել	ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական ղեկավար (համաձայնությամբ)
Թռչունյան Կարեն	ԵՊՀ կենսաբանության գիտահետազոտական ինստիտուտի մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի ղեկավար (համաձայնությամբ)
Խաչատրյան Հրանտ	«ԵՐԵՎԱՆԷՆ» գիտակրթական հիմնադրամի տնօրեն, ԵՊՀ մաթեմատիկայի և կիրառական հետազոտությունների կենտրոնի մեքենայական ուսուցման խմբի ղեկավար (համաձայնությամբ)
Քառյան Գևորգ	Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտի) տնօրեն (համաձայնությամբ)
Սերոբյան Վահրամ	ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի հնէաբանության և շերտագրության լաբորատորիայի ղեկավար (համաձայնությամբ)
Վերմիշյան Հարություն	Երևանի պետական համալսարանի կիրառական սոցիոլոգիայի լաբորատորիայի ավագ գիտաշխատող (համաձայնությամբ)

Հավելված N2
ԲԿԳԿ նախագահի
«17» սեպտեմբեր 2024 թ.
N 213-Ա/Ք հրամանի

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԻՑ ԳԻՏԱԿԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահին (այսուհետ՝ Նախագահ) կից մասնագիտական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) խորհրդակցական մարմին է, որի նպատակն է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի գիտության ոլորտի հայտում ընդգրկվող գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր) վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը:

2. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Խորհրդի անհատական կազմը հաստատում է Նախագահը:
3. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:
4. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Խորհրդի անդամների մեկ երկրորդը:
5. Խորհրդի նիստերը նախագահում և վարում է Նախագահը, կամ նրա հանձնարարությամբ՝ Նախագահի տեղակալը:
6. Խորհրդի նիստերին կարող են մասնակցել Կոմիտեի քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող աշխատակիցները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ պետական մարմիններից հրավիրված ներկայացուցիչներ:
7. Խորհրդի նիստերը դռնբաց են: Նախագահի առաջարկությամբ Խորհուրդը ձայների պարզ մեծամասնությամբ կարող է որոշել առանձին հարցեր քննարկել դռնփակ:

3. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

8. Խորհրդի նիստերն անցկացվում են նախագահողի կողմից հաստատված օրակարգով:

9. Խորհրդի նիստի օրակարգում նշվում են՝

1) նիստի անցկացման օրը և ժամը.

2) քննարկման ենթակա հարցերը.

3) նիստը նախագահողի անունը, ազգանունը և պաշտոնը:

10. Խորհրդի նիստերի և դրանց ընթացքում քննարկվելիք հարցերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը նախապես փոխանցվում է Խորհրդի անդամներին:

4. ԽՈՐՀՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆՎՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

11. Խորհրդի հիմնական խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններից և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայից ներկայացված Ծրագրերի ուսումնասիրությունը և դրանց վերաբերյալ կարծիք ներկայացնելը: Ծրագրերը ուսումնասիրելիս և քննարկելիս հաշվի են առնվում դրանց հետևյալ ասպեկտները.

ա. արդիականություն,

բ. հրատապություն և առաջնահերթություն,

գ. վերջնարդյունքները կիրառող գերատեսչության հետաքրքրություն,

դ. նպատակներ և խնդիրներ,

ե. կատարման ժամկետներ, իրականացման նախադրյալներ (կադրային կազմ, նյութատեխնիկական բազա) և եղանակներ,

զ. ակնկալվող արդյունքներ,

է. նախահաշվի հիմնավորվածություն և տեխնիկատնտեսական ցուցանիշներ.

2) վերլուծել Ծրագրերի գիտություն – արտադրություն, գիտություն – սոցիալ-տնտեսական ոլորտ կապերի զարգացմանը նպաստելու հնարավորությունը՝ հաշվի առնելով նաև Ծրագրերի՝ գիտության և տեխնիկայի զարգացման ոլորտի գերակա ուղղություններին համապատասխանությունը և գիտամշակութային խնդիրների արդյունավետ լուծմանն ու հասարակության կենսական պահանջների բավարարմանն ուղղված լինելը.

3) ուսումնասիրել Ծրագրերին կից ներկայացված երաշխավորող գրությունները և վերլուծել երաշխավորող մարմինների հետաքրքրությունը և Ծրագրերի իրականացման վերջնարդյունքների կիրառման հնարավորությունները:

12. Քննարկումների արդյունքում Խորհուրդը, ըստ ֆինանսավորման և իրականացման անհրաժեշտության, ներկայացված յուրաքանչյուր Ծրագրին տալիս է թվային գնահատական, առավելագույնը 5 միավոր (0,5 միավորի ճշտությամբ)՝ հետևյալ սկզբունքով (ըստ Ձևի).

Ձև Ծրագրերի թվային գնահատականի

	Նկարագրություն	**Միավոր**
Գերազանց	Ծրագիրը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:	5.0 4.5
Լավ	Ծրագիրը համապատասխանում է առաջադրված պահանջներին որոշակի վերապահումներով:	4.0 3.5
Բավարար	Ծրագիրն ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:	3.0 2.5 2.0
Միջին	Ծրագրում շարադրված նկարագրությունը բավարար չէ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար, ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:	1.5 1.0 0.5
Վատ	Ծրագրի իրականացման նպատակահարմարությունը բացակայում է կամ այն չի կարող որոշվել հիմնավորող տեղեկատվության բացակայության պատճառով:	0

13. Քննարկման արդյունքում Խորհուրդը տալիս է առաջարկություն ներկայացված Ծրագրերը Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի նախագծի գիտության ոլորտի հայտում ներառելու, դրանց ֆինանսավորման ծավալների և այլ հարցերի վերաբերյալ:

14. Խորհուրդն իրականացնում է նաև Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեում ներառված և ֆինանսավորում ստացած գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի ընթացիկ (ամփոփիչ) հաշվետվությունների ուսումնասիրումը և դրանց վերաբերյալ եզրակացության տրամադրումը:

15. Խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ կարող է ընդունել խորհրդատվական բնույթի որոշումներ:

5. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

16. Խորհրդի նիստերն արձանագրում է նիստի քարտուղարը:

17. Քարտուղար է նշանակվում Կոմիտեի քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող աշխատակից:

18. Նիստի արձանագրության մեջ նշվում է նիստի անցկացման օրը, մասնակցող Խորհրդի անդամների և հրավիրված անձանց տվյալները, քննարկվող հարցերի և ելույթների հիմնական դրույթները, ընդունված որոշումները և անհրաժեշտ այլ տեղեկություններ:

19. Նիստի արձանագրությանը կցվում են քննարկված հարցերին վերաբերող նյութեր, ինչպես նաև քննարկված հարցի և կայացված որոշման առնչությամբ Խորհրդի անդամների հատուկ կարծիքները (գրավոր ներկայացված լինելու դեպքում):

20. Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում է նիստը նախագահողը:

21. Ծանուցումները և տեղեկատվության փոխանակումը կատարվում է էլեկտրոնային եղանակով:

6. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

22. Խորհրդի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեում ներառված և ֆինանսավորում ստացած գիտական և գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի ընթացիկ (ամփոփիչ) հաշվետվություններն ուսումնասիրելուց և դրանց վերաբերյալ եզրակացություն տրամադրելուց հետո: